



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՍԱՊԱՆՏՈՂԷ

ԺԱԿՈՒ

ԿԱՏ


Բարձր էր Եւրոպայի

Պարագրաֆը

---

Կ. ՊՈՒԽ

— 1874 —



ՄԱՊԵՏՊՈԼԻՆ

ՅԱԿՈԲ

ԿԱՄ

ԲԱՐԻ ԵՒ ՀԱՐՊԻԿ

ՊԱՏԱՆԻՆ

ԹԱՐԳՄԱՆԱՆՑ Ի ԳԱՂՂԻՆԵՐԷՆԵ

ՏԻՊԱՆ Ս. ՄԻԿԱԵԼՅԱՆ

Ա. ԳՈՐԾ

ԱՇԽԱՏԱՆԻ ԳՆԻՔԻՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻԿԷԼՅԱՆ

1874

82

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆ

Խ. Ա. 6276

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ~~

ՍԱՊԱՏՈՂՆ

ՅԱԿՈՒՐ

ԿԱՄ

ԲԱՐԻ ԵՒ ՃԱՐՊԻԿ  
ՊԱՏԱՆԻՆ



ԹԱՐԳՄԱՆՆԱՅ Ի ԳԱՂՂԻԵՐԷՆԷ

ՏԻՐԱՆ ԱՍՏԻԳՅԵՆԷԱՆ



Ա. ԳՈՐԾ

ԱՇԽԱՏԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ



ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻԻԶԷՆՏԻՍԵԱՆ  
1874

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հասակակիցներու ծառայութիւն մը  
ընելու համար ներկայ բարոյական վէպը  
թարգմանեցի, որուն մէջ առաքինի ծե-  
րունի մը պղտի տղոցը հասկցնել կուզէ թէ  
մարդուս արտաքին գեղեցկութիւնը և  
վայելուչ կաղմը չէ մարդս անուանի ընողը,  
այլ շատ անգամ ագեղ և անբարեկազմ  
մարդիկ իրենց հանճարովը, ճարպիկու-  
թեամբը, առաքինութեամբը ու ազնուու-  
թեամբը մեծ համբաւ կունենան և ուրիշ-  
ներուն զարմացմանը արժանի կըլլան :



# ՄԱՊԱՏՈՂՆ ՅԱԿՈՐ

Կ Ա Մ

ԲԱՐԻ ԵՒ ՃԱՐՊԻԿ ՊԵՏԱՆԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Պէտք է գիտնաք, իմ սիրելի փոքր տղաքս, թէ աշխարհիս ամեն կողմերը իրարու չեն նմանիր, տեղ կայ՝ ուր միշտ ամառ է, ուր ոչ ձիւն կը տեսնուի, ոչ սառ. ուր ծառերն երբէք իրենց տերևները չեն թափեր: Այս երկիրներուն մէջ այնչափ տաք կ'ըլլայ որ ժամը չորսէն մինչև ութը չէք կրնար արեգակին մէջ կենալ: Ժայռերը, տուններուն պատերը և փողոցներուն սալաքարերը թէ որ արեգակին ճառագայթներուն դէմ գան, այնպէս կ'իղիչ կըլլան որ՝ զոնոնք շօշափած ատեննիդ մատերնիդ կերին:

Ասոր հակառակ, ուրիշ երկիրներ կան, ուր ամառը երկու երեք ամիս միայն կը տևէ, և տարւոյն միւս մնացած բոլոր մասին մէջ սաստիկ ցուրտ կընէ: Գետինը ձիւնապատ է. և եթէ բոլոր տուններուն

ՋԱՆԱՐԱՆՈՅ Բ. ԱՋԱՏԵԱՆ Ի ԲԻՆ

մէջ չը գտնուէին մեծ կրակարաններ, որ  
 դիշեր ցերեկ կը վառին և կը տաքցնեն  
 սենեակները, այս գաւառաց բնակիչներն  
 անշուշտ պիտի մեռնէին: Այս գաւառներ  
 բուն ամենէն մեծ գէշութիւնը այս է որ  
 ձմեռը դիշերները խիստ երկար են, արեւ  
 գակը մարը կը մտնէ երեկոյեան ժամը եր-  
 կուքէ կա՞ երեքին, և կը ծագի առա-  
 ւօտեան իննին կամ տասնին:

Քայց երկրիս կողմերուն իրարմէ ու-  
 նեցած տարբերութիւնը միայն ասքէն և  
 ցուրտէն չէ: Գաւառներ կան տափարակ,  
 այսինքն առանց մեծ լեռներու, գաւառ-  
 ներ ալ կան որ լեռներով լեցուն են:  
 Դիտած էք երբէք որ գետակի մը կամ լճակի  
 մը ջուրը սաստիկ հողմի մը ատեն, խո-  
 ռոյներ և բարձրութիւններ կը ձևայնէ,  
 լեռնոտ երկիրներն ալ ձիշդ այսպէս են,  
 միայն թէ ասոնց բարձրութիւններն ամ-  
 պերուն մէջ անյայտ կըլլան, զանոնք ի-  
 րարմէ զատող խոռոչներն այնչափ խոր են,  
 որ դիտողին գլուխը կը դառնայ, և երբ  
 որ մարդ մը այն խորութեանց մէջը կե-  
 նայ վերէն հազիւ կը նշմարուի:

Այս խօսքերը միայն այն երկիրներուն  
 համար են, որ բոլորովին լեռնոտ են, որով-  
 հետև պէտք չէ կարծել որ ամեն լեռ-

գտնուած տեղ այսպէս կըլլայ: Ընդհա-  
 կառակն երկրիս կողմերէն շատերը ոչ բո-  
 լորովին տափարակ, ոչ ալ բոլորովին լեռ-  
 նոտ են, և քիչ շատ երկուքին մէջտեղն են:

Գաղղիոյ մէջ, տափարակ գաւառներ  
 քիչ կան, բոլորովին լեռնոտ գաւառներ  
 քիչ մը աւելի են, և շատ գաւառներ ալ  
 կան որ ոչ բոլորովին տափարակ են և ոչ  
 ալ բոլորովին լեռնոտ:

Գիտէք որ Գաղղիա նահանգներու  
 բաժնուած է: Գաղղիոյ մէկ նահանգը իր  
 մէկ կտորն է, որ քառասուն, յիսուն,  
 ութսուն. հազարամետր լայնութիւն ունի,  
 և անկէ քիչ կամ շատ աւելի երկայնու-  
 թիւն. այս կտորներէն իւրաքանչիւրին մէջ  
 ընդհանրապէս մեծ քաղաք մը, շատ ա-  
 ւաններ և գիւղեր կը գտնուին:

Առջի խօսածիս դառնալով, Գաղղիոյ  
 գաւառներուն մէջ կան որ խիստ լեռնոտ  
 են, և այս լեռներն տարւոյն երեք մասին  
 մէջ ձիւնապատ են, քանզի բարձր լե-  
 ռանց վրայ գրեթէ միշտ խիստ ցուրտ կ'ը-  
 նէ: Ժիւրայի նահանգը ասոնց կարգէն է:  
 Քայց թերևս ինձ պիտի ըսէք, ի՞մ պզտի  
 բարեկամներս, այս բաները ի՞նչ յարաբե-  
 րութիւն ունին Սապատոյն Յակոբի պատ-  
 մութեանը հետ, զոր խոստացաք մեզ



պատմել : — Քիչ մը համբերութիւն , եթէ կը հաճիք : Եթէ նախընթաց բացատրութիւնները ձեզի տուած չըլլայի , Յակոբին պատմութենէն բան մը չըպիտի հասկնայիք ինչպէս որ դուք ալ շուտով պիտի տեսնէք . . . արդ կսկսիմ :

Ժիւրայի , ամենէն բարձր շնորհներէն միոյն ստորտը , պզտի տան մը մէջ , երեք եղբարք կ'ապրէին , առջինեկը և կրտսերը քիչ ատենէ 'ի վեր ամուսնացած էին , բայց էն փոքրը տասնեւեց տարեկան էր , Յակոբ կը կոչուէր , թէպէտ և ճշմարիտը ըսելով գաւառին մէջ աւելի Պապատող անունով ճանչցուած էր : Այս խեղճ տղան պզտիկուց վար ինկած ըլլալով խիստ ազեղցած էր , աշուքնուդ առջև բերէք տասներեք տարեկան տղայ մը , մեծ բազուկներով , երկար սրունքներով , ուսերուն մէջ ընկղմուած գլուխ մը , և անոնց վրայ ահագին կուղ մը , և ահա տեսած պիտի ըլլաք Յակոբին պատկերը քիչ մը հեռուէն . քիչ մը հեռուէն կըսեմ , որովհետև , մօտէն իւր անուշ և խեղացի դէմքը , իւր շաւաղոյն այտերը և իւր կապոյտ գեղեցիկ աչքերը գրեթէ մոռնալ կուտային իւր մարմնոյն ազեղութիւնը : Մանաւանդ խօսած ատենը , իւր ձայնը

այնչափ գեղեցիկութիւն ունէր , որ մարդակամայ ախորժանք մը կ'զգտր անկէ :

Յակոբին եղբարքը կաշխատէին տարւոյն մէկ մասը անտառներուն մէջ , թէ իբրև փայտահատ , թէ իբրև ածխագործ ժամանակին համեմատ : Անշուշտ գիտնալու էք որ փայտահատին արհեստը անտառներուն ծառերը կտրել է , փայտահատները այս ծառերուն կոճղերովը կը շինեն զանազան մեծ հեծաններ . ասոնք իրենց ձեին և փայտին տեսակին համեմատ , նաև կամ տուն շինելու կը գործածուին , խոշոր ճիւղերը , հաւասար երկայնութեամբ կարուելով , իբրև վառելու փայտ կը ծախուին , պզտիկները խուրձ կը շինեն , կը տեսնէք որ ծառի մը ամէն կտորները մէյ մէկ բանի կը գործածուին , մինչև տերեւները՝ որ գետնին վրայ նետելով , կը պարարտացեն հողը և անոր բարեբերութիւնը կը պահպանեն :

Ածխագործերը նոյնպէս անտառներուն մէջ կաշխատին : Այսպէս կը կոչուին այն մարդիկը որ շատ ծառի ճիւղեր խիտ խիտ մէկտեղ բերելով , և ուրիշ մէկ երկու զգուշութիւններով կ'այրեն խոհանոցի ածուխ շինելու համար . որովհետև խոհանոցի ածուխը ուրիշ բան չէ , բայց

եթէ այնչափ այրած փայտ որ վառերու  
ատեն ծուխ չհանէր : Բայց թէ որ փայտին  
ածուխը ծուխ չարձակէ , այրած ատեն  
խիստ վտանգաւոր շոգի մը թող կ'ուտայ ,  
որ օգին մէջ կը ցրուի . ուրեմն պէտք չէ  
երբէք ածուխ վառել պղտի սենեակի մը  
մէջ առանց գոնէ գուռները և պատու-  
հանները բանալու . վասն զի , շնչելով այն  
թունաւոր շոգին , խիստ հիւանդ ըլլալու  
վտանգին մէջ կ'իյնանք : Արեւելքի մէջ  
ածուխը կը վառեն և մինչև չի հատնի  
վտանգաւոր կազը , սենեակ չեն տանիր  
կրակարանը :

Յակոբ իւր եղբարցը արհեստին չէր  
հետևած , որովհետև ասոնք զինքը այնչափ  
ուրեղ և այնչափ յուր տեսներով , կը կար-  
ծէին թէ չպիտի կրնար երբէք իրենց ծա-  
նըր աշխատութիւնները տանիլ : Ասով կը  
սխալէին , որովհետև Յակոբ , թէպէտ և  
արտաքուստ տխուր էր , բայց կատարե-  
լապէս առողջ էր , և իրեն հասակակից  
բոլոր աղաքներէն աւելի ճարպիկ ու զո-  
րաւոր էր :

Օդը գեղեցիկ եղած ատեն կերթար  
լեռան վրայ կով արածելու , այս կովերը  
դանազան գիւղացւոց կը վերաբերէին , որք  
մէկ հովուի պաշտպանութեան յանձնած

էին և միայն անոր վարձք կը վճարէին :

Պէտք չէ կարծէք , տղաքս , թէ  
ամառը Յակոբ ամեն գիշեր տուն կը վերա-  
դառնար , կը պառկէր լեռան վրայ եղած  
պղտի խրճիթի մը մէջ որ խիստ դիւրու-  
թեամբ կը շինուէր և կը քակուէր , բայց  
թէ որ , գիշեր ատեն , Յակոբ իւր խըր-  
ճիթին մէջ կը քաշուէր ցուրտէն պահպա-  
նուելու համար էր , որ լեռանց վրայ խիստ  
սասաիկ կըլլայ , նոյն իսկ յուրիսի և օգոս-  
տոսի մէջ : Շատ քիչ անգամ քնանալու  
համար կուգար այս խրճիթը Յակոբ , ու-  
րոզհետև շատ անգամ կը պատահէր որ  
դայլ մը հօտին շուրջը կը թափառէր որ  
հորթ մը կամ ոչխար մը յարկշտակէ , անոր  
համար արթուն կը կենար և ականջով մտիկ  
կընէր որ չըլլայ թէ վտանգ մը պատահի  
իր անասուններուն :

Իր հովուական ցուպէն զատ , որոյ վրայ  
սրածայր երկամբ մը և ճանկ մը անցուցած  
էր , Յակոբ ունէր նաև երկու մեծ շուն ,  
մէկը սև և միւսը թուխ կարմիր , մեկուն  
անունը Սևոյ էր և միւսինը Բնիկ . եր-  
կուքն ալ այն քաջ շուններէն էին , որ կէս  
վարսախ հեռուէն գայլին գալը կը տես-  
նեն և քաջութեամբ անոր վրայ կը նետ-  
ուին :

Յակոբին շուները, գայլերուն հետ կռիւ ըրած ատեննին, սրածայր բեւեռնե-  
րով կաշիէ լայն փոկ մը ունէին վիզերնին, որ  
իրենց շատ օգտակար կըլլար. երբ գայ-  
լերը իրենց սովորութեանը համեմատ ու-  
զէին Սև-կին կամ Ընկերն վիզէն բռնել այս  
վատ գաղանաց ծամելիքները կաշիէ փոկին  
երկաթէ բեւեռներուն վրայ անցնելով կը  
պատռէին :

Յակոբ, ինչպէս որ դուք ալ կրնաք  
գուշակել, իւր շուները շատ կը սիրէր,  
որք թէ պաշտպան էին իրեն և թէ ընկեր.  
առանց անոնց՝ սիրտը բնաւ հանգիստ չէր  
ըլլար, Ուրիշ ընկեր շունենալուն համար՝  
Յակոբ անոնց հետ երկար բարակ խօսակ-  
ցութիւններ կընէր, իսկ այս խօսակցու-  
թեանց նիւթն ինք կը պատրաստէր. բայց,  
Սև-կին և Ընկերին անոր խօսելը դիտած  
ատեննին անանկ կը կարծուէր թէ անոնք  
ստուգիւ իրենց տիրօջը խօսքերը կը հաս-  
կընային :

Խիստ հետաքրքրական և ակորթելի  
էր տեսնել թէ որպիսի գիւրութեամբ  
այս պզտի Սապատողը, իւր երկու շանց  
օգնութեամբը, իրեն հնազանդութեան  
տակ կը պահէր իւր կովերու և եղներու  
հօտը, որուն էն տկարը անշուշտ կրնար

մէկ եղջիւրի հարուածով մը, Յակոբը տա-  
սը քայլ անդին նետել :

Բայց դուք դիտէք, աղաքս, թէ  
Սատուած ուզեց որ անասունները մար-  
դուն հնազանդ ըլլան : Եթէ երկու եզներ  
կռիւ ընէին և ծեծկուէին, Յակոբ քա-  
ջութեամբ անոնց վրայ կը վազէր և հով-  
ուական ցուպին հարուածներովը իրարմէ  
կը զատէր. յետոյ, իրենց տէրօջը ձայնին  
վրայ, սև-ի և ընկեր խռովարարներուն  
վրայ կը յարձակէին, և բոլորովին խաղա-  
ղութիւն կը հաստատէին եզներն իրենց  
առջև ձգելով, և մէկը մէկ կողմ, միւսն  
ուր մէկ կողմ քշելով : Դարձեալ արօտա-  
տեղիները փոխուելու ատեն, եթէ հօտը  
հարկ ըլլար մշակուած դաշտեր կամ մա-  
տաղասունկ գարաստաններ ունեցող ճամ-  
բայէ մը անցնել, երկու շուները անանկ  
աղէկ կը պահպանէին հօտին երկու կող-  
մէն, որ արջառները կանցնէին առանց  
փոքր վնաս մը պատճառելու :

ԳԼՈՒԽ Բ

Վերջին ձմեռուան սկիզբը, Նոյեմ-  
բեր ամսոյն վերջերը, Յակոբին եզբայրնե-

ըր առաւօտուն կանուխ մեկնած էին իրենց փայտահատի գործիքները վնտուելու համար, գորս անտառին մէջ դանուած փոքրիկ հիւղին մէջ ձգած էին, որ իրենց տունէն քսան հազարամէթը հեռու էր:

Հիւղը տնակ մ'է, բաղկացեալ հողին մէջ մխուած կամ ցիցերու վրայ հաստատուած ծառի կոճղերէ, որք այնպէս մը իրարու քով շարուած են որ պատ մը կը ձևացնեն: Ծակ կամ բաց տեղերը մամուռով կը գոցուին: Տանիքը կը բաղկանայ իրարու վրայ գամուած տախտակներէ: Հիւղի մը մէջ ընդհանրապէս կան պզտի պատուհան մը, բրտի կաւով ծեփուած հարթ քարերով կրակորան մը, և փայտէ նիզով գուռ մը:

Փայտահատներն և ածխագործերը ձմեռը այս տնակներուն մէջ կը քաշուին, հոն կեփեն կերակուրնին և հոն չոր վայրի ձարխոտի անկողիններու վրայ կը պառկին:

Երբ Յակոբին եղբայրները ամեն շաբաթ օր իրենց տունը կը վերադառնային, իրենց գործիքները իրենց հիւղերուն մէջ կը թողէին, մինչև որ ձմեռն հասնելով և անտառի աշխատանքնին դադարելով դանոնք բոլորովին տուն բերէին:

Բայց այս անգամ կատարեալ նախա-

տեսութիւն ըրած չէին: Շաբաթ գիշեր մեկնելով՝ երկուշաբթիին կսպասէին որ հիւղը վերադառնան. բայց երկուշաբթին և նոյն իսկ շաբթուն քանի մ'օրերը օդը գէշ երթալով՝ ճամբայ ելնելու վախցան:

Վերջապէս հինգշաբթի օրը որոշեցին երթալ երկրորդ օրը իրենց գործիքները առնելու, և որովհետև քառասուն հազարամէթը տեղ պիտի քալէին՝ որոշեցին որ գիշերսւան մէջ ճամբայ ելնեն:

Այն անտառը որուն մէկ մասէն պիտի անցնէին, բարձր լեռան մը կողին վրայ էր, և ունէր հեղեղատներ, ճահիճներ և դահաւանդներ: Ճամբաները գրէթէ բնաւ որոշ չէին, այնպէս որ մեծ վարժութիւն պէտք էր չը մոլորելու համար. բայց Յակոբայ եղբայրները, անոր ամեն կողմերուն ալ վարժուած ըլլալով, զայն խիստ լաւ կը ճանչէին, և բնաւ չփոթած չէին, թէ տուն վերադառնալու և թէ ուղած տեղերնին երթալու ատեն:

Երբ Յակոբ ուրբաթ օր արթնցաւ. իւր եղբայրները արդէն շատոնց մեկնած էին, Յակոբ, որ իւր արհեստին համար իւր կենաց կէսը բաց օդի մէջ կ'անցնէր, շատ անգամ մեծ տեղատարափներու ենթակայ եղած էր՝ հեռի իւր խրճիթէն,

և որ աւելի գէշն է, զուրկ ս ե է ապաստանարանէ : Մինչև ոսկրները չթըրջուելու համար իրեն բան գործ կրթած էր ուշագրուութեամբ ուսնիլ փոթորկաց, հովին, ձիւնին, անձրևին բոլոր այն նախագուշակ նշանները, որոնցմով Աստուած, իւր անհուն բարութեամբը, մարդոց և մինչև իսկ անասնոց իմաց կուտայ որպէս զի զգոյշ գտնուին և փութան դառնալ մէկն իւր տունը, միւսն իւր բոյնը և որջը : Պզտի խելացի և սրամիտ Սապատողը յաջողած էր վերջապէս առաջուրնէ ճանչնալու օգին ամեն փոփոխութիւնները արեգական և լուսնին երևոյթէն, հովին ուղղութենէն, ամպերուն ձևէն ու գոյնէն, թռչնոց թռչելէն և կանչուըտելէն : Չկար անոր պէս յաջողակ հովիւ՝ որ կարենար երեկուրնէ զրուցել երկրորդ օրուան գեղեցիկ կամ անձրևոտ ըլլալը : Երբեմն, արևը խիստ գեղեցկաբար շողշողած ատենը, Յակոբ կը հաւաքէր իւր հօտը և լեռանց դադաթները ձգելով ստորին լեռնադաշտերը կ'իջնէր . ասոր պատճառն այն էր որ Պզտի սապատողը դիտած էր որ իր արջառները սովորականէն աւելի կը բառաջէին, ամպերը թեթև՝ հողմի ատեն տար ու բեր կըլլային, և ուրիշ շատ

մը փոթորկի նշաններ : Առջի բերան հօվիւները իւր վախերը կը ծաղրէին :

« Խնդացէք, խնդացէք, կըսէր անոնց Յակոբ . երբ երկու ժամէն ձեր ահաբեկած հօտը մէյմէկ կողմ փախչի, երբ երկինք որոտայ, երբ հովերը մռնչեն, երբ հեղեղի պէս անձրև գայ, այն ատեն Յակոբը մաքերնիդ պիտի իյնայ, և պիտի փախաքիք որ դուք ալ անոր կեցած տեղը գտնուէիք : »

62967. և

Միշտ ըսածին պէս ալ ճիշդ կը պատահէր : Ուստի, ետքերը, երբ իր ընկերները Յակոբին հեռուէն մեկնիլը կը տեսնային . փոխանակ խնդալու մէջերնին կըսէին . « օ՛ն, ահաւասիկ Սապատողը փոթորիկ կը գուշակէ, մենք ալ մեկնինք . » և իրենք ալ փութով մեկնելու կը պատաստուէին :

Վերագառնանք Յակոբին և իւր եղբարցը : Յակոբ արթնալուն պէս, տունէն մեկնեցաւ և բարձր տեղ մը ելաւ ուրկէ կրնար դիտել բոլոր հորիզոնը : « Աստուած իմ, ըսաւ, որչափ գէշ պիտի ըլլայ օգը . այնպէս ձիւն պիտի գայ որ երբէք տեսած չեմ : Ի՞նչ պիտի ըլլան իմ խեղճ եղբայրներս : » Խիստ տխուր դէմքով վար իջաւ, բայց իւր հարսերուն բան մը չըսաւ, որ

պէս զի զանոնք չահարեկէ : Քիչ մը ետքը արեգակը ծագեցաւ , բայց այնչափ տըժ-  
 դոյն այնչափ տժգոյն որ մուլթ և գորշ  
 երկնքի մը մէջ անյայտ եղող դեղին բիծի  
 մը կը նմանէր : Ամենեկն հովի ձայն չէր  
 լսուէր , և օդը երթալով կը գոցուէր :  
 Գէն ժամէն ձիւնը սկսաւ գալ , բայց այն-  
 պիսի առատութեամբ , որ քիչ մը ժամա-  
 նակէն գիւղը լեցուեցաւ : Զիւնը մինչև  
 ցորեկ շարունակեց . գնտակները իրարու  
 ետեւ այնչափ շուտով վար կիջնային և  
 այնչափ մեծ էին որ կարծես թէ իրար  
 փակած էին և միայն մէկ զանգուած մը  
 կը ձևացնէին , որ կամացուկ մը հողին  
 վրայ կը նստէր : Յորեկը օդը բացուեցաւ  
 և փոխուեցաւ յանկարծ , հիւսիսային հովը  
 ելաւ և վանեց ամպերը , որ սահեցան գէպ  
 ՚ի հորիզոն : Այս սաստիկ և կծու հովը ար-  
 գիլեց արեգակին ճառագայթները ձիւնը  
 հալեցնելէ , ՚ի բաց առեալ այն տեղերը  
 ուր կամ հողը բարձր էր , կամ ժայռերով  
 խոնուած էր , և կամ տուներ կամ շատ մը  
 ծառեր կը գանուէին :

Պէտք չունիմ ձեզ ըսել , սիրելի բա-  
 րեկամներս , թէ լեռան ստորոտն եղած  
 պղտի տանը մէջ որչափ սրտաբեկութիւն  
 և անհանգստութիւն կը տիրէր : Յակո-

բին եղբարցը կլիները կուլային տաք ար-  
 ցունքներով , Յակոբ միայն չէր լար , և կը  
 ջանար իւր քոյրերն ապահովցնել , բայց  
 և այնպէս իւր սիրտն ալ անոնց չափ տը-  
 խուր էր , իւր միակ յոյսն ան էր որ իւր  
 եղբարքը ձիւն գալը տեսնելով մէկ տեղ  
 մը գտած կեցած և երթալ գործիքներն  
 առնելու դիտաւորութենէն հրաժարած ըլ-  
 լան : Այս պարագայիս մէջ շատ հեռուն  
 եղած ըլլալու չէին և որովհետև կատարե-  
 լապէս անտաւը կը ճանչէին , և իրենք ալ  
 մեծ և հուժեղ էին , անյուսալի չէր որ  
 դիչեր չեղած ուլթը հազարամթր տեղ  
 քալած ըլլան նոյն իսկ մինչև փորերնին  
 ձիւնին մէջ թաղուած ըլլալով :

Տունէն յիսուն քայլ հեռուն շքեղ  
 կուէնի մը կածէր : Կուէնին Գաղղիոյ ծառե-  
 րուն ամենէն խոշորն և ամենէն բարձրն է ,  
 իւր կոճղը յաճախ նետի մը պէս ուղիղ է  
 և իւր հորիզոնականապէս տրամադրուած  
 ճիւղերը զայն կը նմանցնէին հեռուէն ան-  
 սահման դալարութեան բուրդի մը : Յա-  
 կոբ ուղեց երթալ մինչև այս ծառը , և  
 անոր վրայ ելնել հեռուն նայելու համար  
 թէ եղբայրները կրնայ տեսնել :

Բայց չկրցաւ անոր մօտենալ առանց  
 մինչև ծունկերը ձիւնը մտնելու : Զիւնով

դիզուած կուէնիին էն վարի ճիւղերը գրեթէ գետնին երեսին կը հասնէին, և Յակոբին շատ դժուար չեղաւ մինչև ծառին դագաթը բարձրանալու: Հոն կարելի եղածին չափ հանգիստ դիրք մը բռնեց, և իւր աչքին առածին չափ հեռուները զըննեց: Ճահիճները, դաշտերը, ճամբաները, խրամները և խողովները աներևութացած էին ճերմակ խիստ մեծ սաւանի մը ներքեւ, որուն վրայ ասդիս անդին կը տեսնուէին ծառերը, տուները և ժայռերը:

Այս տեսներով՝ Յակոբին սիրտը նեղցաւ, և գոգցես բողբոջին վճատեցաւ, սակայն կրցաւ իւր յուզմունքը քոյրերէն ծածուկ պահել: « Բան մը չեմ տեսնէր, ըսաւ անոնց. բայց ցուրտը հետզհետէ աւելի կը սաստկանայ, և այս երեկոյ, արեգակին մարը մտնելէն վերջը, ձիւնը պիտի սկսի շատ տեղեր լեցնել, երթամ մեր դրացիներուն տունը, և զանոնք հետս առնեմ՝ եղբայրներս փնտուելու համար: Խիստ հաւանական է որ անտառին ամենէն մօտ մէկ հիւղին մէջ քաշուած ըլլան, և դիչերուան կ'սպասեն որ ձիւնը քիչ մը կարծրանայ և ոտքերնին մէջը չընկըզմի: Որովհետև լուսնի լրման ատեն է, և բոլորովին սառնագին եղան ակի մէջ եմք՝ այս դիչեր հիմակուան

պէս երկինքը պայծառ պիտի ըլլայ: »

Յակոբ, ինչպէս որ ըսած էր, զնաց ամենէն մօտ տուներէն երկուքն, իր եղբարցը ճամբորդութիւնը պատմեց անոնց, և այնպիսի աղբու խօսքերով իւր քոյրերուն վշտաբեկութիւնն յայտնեց, և երկու բարեկամներ, երկու դրացիներ, անտառին մէջ, առանց օգնութեան, ձգել տալն սրչափ անվայել բան ըլլալն այնպէս զգալի ընել տուաւ անոնց՝ որ խօսք տուին 'ի միասին երթալ փնտուել: Յիրաւի, իրիկուան ժամը ութնին, վեց փայտահատ հրացաններով զինուած և չուաններ, կացիններ, և մեծ դիմացկուն գաւազաններ առած՝ Յակոբայ եղբարցը տունը հասան: Երկու կիները զանոնք ընդունեցին իբր ազատարարներ, և աղաչանքներ ու շնորհակալութիւններ մատուցին անոնց . . . :

« Բայց ո՛ր է ուրեմն Սապատողը » ըսաւ անոնցմէ մէկը:

Անդրանիկ եղբօրը կլնը պատասխանեց. « կէս ժամէ 'ի վեր դուրս ելած է, և անտարակոյս քիչ ատենէն կը վերադառնայ: Այս առաւօտէն 'ի վեր Յակոբ ալ ճանաչելի չէ. այս այնչափ անուշ, այնչափ երկիւղած դէմքով մարդը յանկարծ քաչ և հաստատամիտ մէկն եղեր է. . . եթէ

ան չըլլար բոլորովին անտանելի պիտի ըլլար մեր քաջած նեղութիւնն ու տագնապը, բայց նա այնչափ վստահ, այնչափ աներկիւղ կերևի որ ակամայ կստիպուինք յուսալից սիրտ մը տածելու . . . : Գնաց տեսնել թէ կարելի է անտառէն անցնիլ, կամ թէ աւելի աղէկ չէ որ բարձրերէն քալէք. կը կարծէ թէ մեր ամուսինները լաւագոյն ճամբան պիտի ընտրեն, և ուղեց անձամբ ապահով ըլլալ թէ անտառէն դիւրաւ կերթուի:»

Յակոբ փայտահատներուն հասնելէն առաջ դուրս ելած և դէպի անտառ դացած էր, իւր հաւատարիմ ընկերն ալ հետն առած էր իսկ Սևոսի ճամբորդներուն հետ դացած էր: Ինչպէս Յակոբ կը կարծէր, ցուբառ այնչափ սաստկացած էր որ իւր ոտիցը տակ ձիւնը կը շառաչէր առանց մէջն ընկղմուելու, մինչդեռ միւս կողմէն լուսինն ալ անամպ երկնքի մը մէջ փայլելով, իւր քաղցր լուսովը բոլոր լեռնադաշտը կը ծածկէր:

Անոր համար գրեթէ առանց դժուարութեան մինչև անտառին առաջին ծառերուն մօտ հասաւ, բայց հաղիւ մէկ քանի քայլ ալ առաւ, այն ճամբէն քալելն անկարելի ըլլալն հասկեցաւ: Տեղ տեղ ձիւնը դիզուած ըլլալէն զատ, ծառերուն

և անոնց կազմած խալատանարաններուն դերքին նայելով, ձիւնն այնչափ թուլ էր որ մինչև իր ծունկերը մէջը կը սահէր: Սակայն ուղեց իր ճանչած մէկ ճամբան ալ փորձել, որ այնպիսի դերք մ'ունէր որ շատ անգամ, բոլոր ճամբաները դոց եղած տտեն անկից անկարելի կ'ըլլար անցնիլ. մտաւ այն ճամբան, ոչ առանց նեղութեան, բայց ամէն վայրկեան ձիւնին մէջ թաղուելու վտանգով: Այս ճանապարհը առջի բերան բաւական աղէկ երևցաւ իրեն. բայց մէկ հազարամեթր երթալէն յետոյ բոլորովին փլած ձիւնի կոյտերով դոցուած դատաւ,

Աղէկ համոզուելով այս վայրկեանէն 'ի վեր թէ, երբ մինչև անգամ իւր եղբայրները ուղէին անտառէն անցնիլ, ըստիպուած էին իրենց դիտաւորութենէն հրաժարիլ և բարձր տեղուանքն ելնել, Յակոբ աճապարեց փայտահատներուն դառնալ այս նոր լուրը իմացնելու:

Եւ երբ կը քալէր այն ճամբէն որուն վրայ արդէն խօսեցանք, ընկեր, որ մինչև այն ատեն ամենևին անհանգստութեան նշան մը չէր ցըցուցած, յանկարծակի կանգ առաւ. ականջները անկուեցան, իւր թիկանց մտղը ցցուեցաւ, պօչը ձրգտեցաւ: Ասոր վրայ, Յակոբ զարհուրե-



ցաւ . « գայլեր » պոռաց , բայց իսկոյն հանդարտեցաւ . « վախնալու ժամանակը չէ , ըսաւ ինքնիրեն , վախնալէն բան մը կանցնի՞ ձեռքս , ընկերին հետ մինակ եմ , և սէտք է որ երկուքնիս ալ այս դժբն դակ պատահարէն խոյս տանք : »

Արդարեւ ընկեր , Գայլի հոտ առած էր : Յակոբ , որ կը ճանչէր իւր շանը հրաշալի բնազդումը , բնաւ չէր տարակուսէր որ տուն չը հասած վրանին պիտի յարձակին , անոր համար իւր քայլերը փութացուց , մտածելով որ եթէ աւելի յառաջ երթար՝ իրեն օգնութեան հասնիլ դժուար պիտի չլլար : Քալած ատենն ինքզինքը Աստուծոյ կը յանձնէր շերմեռանդ աղօթքով մը :

Յակոբ տասը վայրկեանի չափ ականջ տուաւ , բայց իւր ոտքերուն տակ ձայն հանող ձիւնէն զատ ուրիշ ձայն մը չը լսեց : Արդէն կսկսէր հաւատալ թէ ընկերը սխալած էր , երբ հազիւ տեսակ մը շիտթ մրմնջիւնի ձայն մը իւր ականջին հասաւ . քիչ մը ետքն աւելի որոշ կերպիւ ուռնալու ձայներ լսուեցան , որ քիչ քիչ մտածեցան , յետոյ վերջապէս անտառը սուկալի ժխորէ մը թնդուեցաւ :

Յակոբ և ընկեր կանդ առին . Յակոբ բոլորաիքը նայեցաւ ապաստանարան մը ,

ապաւէն մը փնտռելով . իսկ ընկեր խորիւտաբար եկաւ կեցաւ իւր տիրօջը առջև , առջևի թաթերը և ցռուկը երկնցնելով , շրթունքները ամփոփելով և իւր ահաւոր ժանիքը ցուցնելով : Գայլերը դեռ չէին երևար . բայց անշուշտ ասոնք ալ Յակոբին հոտն առեր էին , որովհետև իրենց աղաղակները կարծես յանկարծ կրկնապատկեցան :

Յակոբ իւր շուրջը քննելով իրեն մօտ մեծ ժայռի կտոր մը տեսաւ , որ կերևար թէ երեք մէթր բարձրութիւն ունէր , և որուն չորս երեսներն ալ շիտ շիտակ կրտրուած էին . մէկ կողմէն այս անհետեւ թարը ծառի մը կրթնած էր , որուն ճիւղերը գրեթէ մինչև դետին կը հասնէին : Յակոբ ծառին վաղեց , անոր վրայ ելաւ , և ժայռին դադարթին բարձրութեանն հասնելով կանդ առաւ : Ընկեր ալ ինքզինքին ուժ տալով ուզեց խոյանալ քարին վրայ իւր տիրոջը քով ելնել , բայց թաթերը սահելով վար ինկաւ . . . Յակոբ , որ հետն առած էր իւր գաւաղանը , սուլեց շանը , ասով ժայռին դէմ դէպի վեր կանգնեցաւ . այն ատեն Յակոբ իւր երկար դաւաղանին կարթը ընկերին վզնոցին մանեակին անցուց . յետոյ մէկ ձեռքով ժայռին խորդ ու բորդ տեղերէն բռնելով , և միւ-

սովն ալ բոլոր ուժովը քաշելով՝ յաջողեցաւ շունն իր քովը հանել, որ, ինքն ալ իր կողմէն ջանք կընէր ոտքերովը և մինչև իսկ բերնովը :

Եթէ Յակոբ վայրկեան մ'ալ ոչ մնացած ըլլար, շունին բանը բուսած էր. որովհետև վեր հանելէն անմիջապէս յետոյ վեց գայլ երևցան ժայռին ստորտը :

Սովալըլուկ խումբն իսկոյն ժայռին չորս կողմը պտըտեցաւ. Յակոբ այն ատեն տեսաւ իրենց վայլուն աչքերը՝ գէպ իրէն ուղղուած, և լսեց անոնց կզակներուն կրճտելը, որոնց ճերմակ և սրածայր ակռաները լուսնի լուսովը կը վայլէին : Գայլերը, իրենց այնչափ մտադտնուող այս որսէն միշտ գրգռուելով՝ քիչ մ'ատեն ժայռին չորս կողմը ափ առին՝ անոր ամենէն նուազ սեպադեալ կողմը փնտաւելով :

Յանկարծ Յակոբ տեսաւ որ խումբին ամենէն խոշորը ետև կը քաշուի, և կուզէ ոստնուլ : Աներկիւղ երիտասարդը իւր ծնգադ կրունկներուն վրայ կեցաւ ոտնուր մը, և գայլին ցցուց իւր գաւազանին ծայրը, որ ուժով մը վեր նետուած ատեն սրածայր երկաթին՝ զարկաւ և կուրծքին մէջ տեղը մահացու վէրք մը բացուեցաւ : Սոսկալե աղաղակմը ձգելով՝ թաւալազլոր

վար ինկաւ : Այս տաղնապի և մահու ազդակին վրայ, միւս գայլերը, իրենց սովորութեանը համեմատ վիրաւորելոյն վրայ ինկան և 'ի քթթեւ ական զայն լափեցին :

Սակայն, գայլերուն եկած ատենը, շրջակայ տանց բոլոր շուները մասնաւոր կերպով մը հաշել սկսած էին, ու այն փայտահատները, որ ճամբայ ելնելու համար, Յակոբին ետ դառնալուն կապասէին, իսկոյն շուներուն այսպէս պօռալը տեսնելով փութացին Սապատողին օգնութեան հասնիլ : Քանի մը վայրկեան ձիւնին վրայէն իւր քայլերուն նայելով յառաջ անցան, բայց իրենք ալ շուտով լսեցին գայլերուն աղաղակները : Գայլաբնակ քաղաքացի ըլլանակիչները այս անամոց ձայնին վարժուած են և անոր կերպէն կը հասկնան թէ մարդուս վրայ կը յարձակին կը փախչին կամ որոսի մը վրայով կուի կ'ընեն :

« Սատուած իմ, ըսաւ փայտահատներէն մէկը, ահա գայլերը կուի կ'ընեն. չըլլայ թէ խեղճ Յակոբին գիտկին համար եղած ըլլայ այս :

— Իւր շունը հարկաւ իրեն իմաց տըռած ըլլալու է, կրկնեց ուրիշ մը, Յակոբ ծառի մը վրայ եղած ըլլալու է, բայց ինչեր իրեն պէս չկրնալով ընել գայլերը զինքը բզիկ բզիկ ըրած են :

— Կը ճանչեմ Յակոբին իւր շանը վրայ  
 ունեցած սէրը, կրկնեց երրորդ մը, և  
 գժբաղդը պիտի ուզէ անտարակոյս զայն  
 պաշտպանել, և՞ կրնայ ըլլալ որ երկուքն  
 ալ հիմայ մեռած ըլլան : »

Այսպէս խօսելով փայտահատները հե-  
 տոզհետէ իրենց քայլերը կը փութացնէին,  
 մերթ ընդ մերթ սաստիկ պուշտալով և  
 հրացան պարպելով, որպէս զի գայլերը  
 վախցնեն, և Յակոբին ալ սիրա տան եթէ  
 գեռ ողջ էր :

Կէս ժամէն հասան (որովհետև ձիւնը  
 դանոնք շատ ուշացուցած էր) կուռոյն տե-  
 րը, և խակոյն հինգ կամ վեց անգամ հրա-  
 ցան պարպելով գայլերը փախուցին : Յա-  
 կոբ և իւր շունը միշտ իրենց ժայռին վրայ  
 էին . գայլերը քանիցս խոյացած էին մինչև  
 ժայռին գագաթը ուր Յակոբ իրեն ամբողջ  
 ըրեր էր, բայց միշտ քաջ հովիւն իւր ցու-  
 պին լայն և հասու երկաթովը անոնց դէմ  
 գրած էր : Ֆանի մը վայրկեան առաջ գայլ  
 մը վար ձգած էր, որուն առջևի թաթերը  
 այնչափ ուժգին բռնած էին ժայռին վերը  
 զանուած խորդ ու բորդ տեղուանքն, որ  
 ընկերն ակուաներովն իսկ հաղիւ յաջողեցաւ  
 զատել :

Ազատարարներուն մէջ Յակոբ չը տես

ներով իւր եղբայրները, անմիջապէս հաս-  
 կըցաւ թէ անոնք չէին վերադարձած :  
 Իւր ամբողջն վար իջնելուն պէս, ըսաւ  
 փայտահատներուն . « ահա ամենքս ալ  
 մէկտեղ եմք, ժամանակ չը կորսնցնենք .  
 ասկից քիչ մ'ալ անդին անտառէն անցնիլ  
 անկարելի է . բոլոր ճամբաները կակուղ  
 ձիւնով լի են . կարծեմ թէ իմ եղբայրներս  
 բարձրերն են . մենք ալ բարձրէն երթա-  
 լու ենք որ անոնց առջև ելնենք, և կամ  
 գոնէ ետևնուն հասնինք . կարելի է ստիպ-  
 ուած են իրենց հիւղին մէջ փակուիլ դայ-  
 լերէն վախնալով, և մեզ կ'սպասեն, ինչպէս  
 որ ես ձեզ կ'սպասէի . . . անոնք ալ ինձ  
 պէս բախտաւոր պիտի ըլլան արդեօք :

— Բայց, ըսաւ փայտահատ մը, բարձ-  
 րերը չենք գացած, և անց ու դարձերը  
 չենք ճանչեր : Ամառը ցերեկ ատեն ան-  
 գամ տունէն դուրս չէինք ելներ, ուրեմն  
 որչափ տւելի հիմա, որ բոլոր անտառին  
 ճահիճները, բոլոր ծակերը, բոլոր ճամ-  
 բաները ձիւնով գոցուած են :

— Իրաւ, ըսաւ ուրիշ մը, երկու մարդ  
 փրկելու համար վեց ընտանեաց հայրերու  
 կեանքը վտանգի մէջ դնելու է՞ : »

Այս խօսքերը շփոթութիւն և լքումն  
 պատճառեցին խումբին մէջ . . . :

« Ինչպէս , պօռաց Յակոբ , եօթը հոգի ենք . գիտէք որ երկու դրացիներ , երկու բարեկամներ ձիւնին մէջ են , դայլերուն վախին տակ և բողբոջին յուսահատ կամ անօթութենէ պիտի մեռնին կամ գաղաններու ճարակ պիտի ըլլան , և դանոնք ազատելու համար փորձ մ'անգամ ընել չէք ուզեր . առանց եղբարցս համար վտանգի մը յանձնառու ըլլալու լառանց անոնց համար բան մը ընելու հանգարտ սրտով տոն կը գառնաք . այս կարելի չէ . ես կը ճանչեմ բարձրերը , իմ կեանքս հոն անցուցած եմ , չիկայ գլուխս խօթելու չափ ծակ մը , չիկայ մացառ մը , չիկայ ժայռի կտոր մը , որոյ տեղը չըգիտնամ , չիկայ ճամբայ մը՝ ուսկից չը կարենամ քայել՝ եթէ նոյն խոկ տասն ոտք ձեան տակ անյայտ եղած ըլլայ : Ես առջևէն կը քայեմ , ես ուր երթամ դուք ալ ետևէս կուգաք : Ի՞նչ կը վախնաք . չեմ խնդրեր ձեանէ որ զիս բռնել կարենալու չափ իմ մօտէս գաք . ձեանէ տաք քայլ հեռի կը մնամ , և եթէ բարեգութն Սատուած ուզէ որ ես փոսի մը մէջ գլորիմ՝ դուք կարող կըլլաք կանգ առնուլ , և ետ դառնալ ձեր քայլերուն վրայ , որք հարկաւ ձիւնին վրայ տպուած մնալով , պիտի առաջնորդեն ձեզ ապահով կերպով մինչև


ձեր տունը . . . իմ խեղճ եղբայրներս , որ պատրաստ էիք այլոց օգնելու համար ամեն բան ընել , ինքզինքնիդ ամեն վտանգներէն չը խնայել , տեսէք թէ ինչպէս կը վարձատրուիք . Սատուած իմ . Սատուած իմ . և Յակոբ արատուելով , ծունկ չուգեցաւ , ձեռքերը դէպի երկինք բարձրացուցած . . . իւր աղօթքը եղաւ այն սրտաբեկ ազաղակներէն մին , զոր ցաւով ընկճեալ արարած մը դէպի իւր Սատուծոյն կ'ամբառնայ . . . « Սատուած իմ , ըսաւ , դժու ալ եղբայրներս երեսի վրայ պիտի թողուս : »

Խեղճ Սապատողին շարժմունքը այնչափ ինքնաբեր , այնչափ ճշմարիտ , այնչափ բարձր և նոյնպէս այնչափ փափուկ պարզութեամբ մը եղած էր , որ փայտահատները փութացին զայն կանգնեցնելու : « Յո , օն , ըսին ամենքը մէկէն . . . Յակոբ իրաւունք ունի , աններելի վատութիւն և ամօթ բան մ'է մեզ , և մեր թեմին՝ թէոր այս առաքինի անձին չ'ընկերանանք : Գա՛նէ առջևէն և շուտով :

— Այո , այո , կրկնեց ուրիշ փայտահատ մը , պէտք չէ որ Յակոբ իւր անձնուիրութեանը զոհ ըլլայ . . . կեցեր որ սա շուանը մէջը՝ կապեմ , մենք անոր միւս ծայրէն կը բռնենք , և եթէ խոր

տեղ մը սահիս կյնաս , անով քեզ կը քա-  
չենք կը հանենք :

— Մի վախնաք , պատասխանեց Յա-  
կոբ , երկրին ամեն կողմերը դիտեմ : Ձիւ-  
նը պինդ է , և ձեզ ամենևին դէշ տեղէ  
չը պիտի տանիմ . . . „ բայց , որչափ որ  
ինք ապահով կերևնար՝ դարձեալ մէջքը  
դիմացկուն չուան մը անցուցին :



### ԳԼՈՒԽ Գ

Պզտի կարաւանը Յակոբին առաջնոր-  
դութեամբն նախորդ տեսարանին անցած  
ճամբայէն երկու երեք հազարամէթր քա-  
լելէն յետոյ կարճ ճամբով սկսաւ լեռներէն  
վեր ելնել : Անգամ մը անտառէն դուրս  
ելնելուն պէս , Յակոբին սիրան աւելի հան-  
դարտեցաւ : « Ահա իմ տունս » պօռաց  
զուարդութեամբ , թէպէտև լեռը ամեն  
կողմէն ճիւղ ճերմակ կտրած էր և միայն  
քանի մը ժայռեր , քանի մը ծառեր կը  
տեսնուէին հոն բիծերու պէս , բայց և այն-  
պէս քաջ առաջնորդը առանց ամենափոքր  
վարանման յառաջ կերթար : Կարծես թէ  
իւր աչքերը գետինը ծածկող ձիւնին մէ-  
ջէն կը տեսնէին : Բայց եթէ իր քայլերուն  
օգնող բան մը կար , այն էր գետնին գրէ-

թէ անյայտ եղած խորդ ու բորդ տեղերն  
և տեղ տեղ բարձրացող ժայռերը : Սակայն  
երեք ժամ քալելէն յետոյ , Յակոբին երե-  
սը խռովեցաւ կերևէր որ աչքովը բան մը  
կը բնտռէր զոր չէր տեսներ . իւր դէմքն  
յանկարծ մթագնեցաւ . . . « Մեր անց-  
նելիք ամենէն դէշ տեղն է այս , ըսաւ  
փայտահասներուն : Հոս ժայռից շղթայ մը  
պէտք է ըլլայ , և կը յուսայի որ ձիւնը զայն  
գոցած ըլլալու չէ , բայց բոլորովին գոց-  
ուած է : Անկարելի է անցնիլ եթէ հաս-  
տատ կերպով անոր տեղը չկարենանք հաս-  
կընալ , որովհետև այն ձիւնը զոր այս տեղ  
կը տեսնէք՝ այնպիսի ծակեր , և այնպիսի  
հարթ և սուր զառիվայրներ ծածկած է  
որ ծայրերնին անյատակ անդունդներ են :  
Կայնեցէք , որ ետ առ ջլեէն երթամ , և ձեր  
անունը տամ :

Այս ըսելով Յակոբ ամեն տեսակ զգու-  
շութիւն կը բանեցնէր՝ ամէն մէկ քայլին  
իւր շուրջը գտնուած ձեան վրայ քննու-  
թիւն ընելով : Այլէն ձախ կերթար , առաջ  
և ետ կերթար , բայց իւր հետադօտու-  
թիւնները ՚ի դերև կ'եղնէին : Կարծես թէ  
անգտանելի էր այն ժայռերուն խումբը՝  
որսնցնով միայն կրնար իւր ճամբան որոշել ,  
զի հարկ էր անոնց քովէն քալել : Ամեն  
տեղ իւր ցուարը ամբողջ ձիւնին մէջ կըն-

կըղմուէր . . . Ստուած իմ, կ'ըսէր Յակոբ ինքնիրեն, զուր տեղը այնչափ ճամբայ քալել . հիւղէն չորս հազարամէթր հետեւ հասնել և ետ դառնալու հարկադրուիլ : Ստուած իմ, Ստուած իմ չես գիտար իմ եղբարցս վրայ :

Այս վերջին խօսքերն արտասանելու տունն՝ Յակոբին սուքերը կարծր իրի մը հանդիպեցան : Շուտով այս տեղւոյն ձիւնը ստղկեց, և անպատմելի ուրախութեամբ մը տեսաւ որ իւր փորած ծակին մէջ թուխ կէտ մը կար : « Սհամ ժայռերը, պօռաց : Այս կողմն եկէք, բարեկամներս, այս կողմը : » Յիրաւի իւր բնուած ժայռից շղթային ամենէն բարձր գագաթը գտնելու յաջողած էր : Շուտով սկսաւ նօրէն գննել, և իւր ցուպը հաղիւ քանի մը ոտք ձիւնին մէջ ընկղմուեցաւ : « Յաջողեցանք, կրկնեց Յակոբ, բայց զգոյշ եղիք : Ես ամեն քայլ պիտի զննեմ, դուք ալ իմ զննած ծակերս պէտք է որ ձեր աջ կողմը ձգէք, և մէկ մէգրէն աւելի չը հեռանաք անոնցմէ . . . այս կերպով համարձակ կարող էք յառաջ երթալ : Բայց, ձեզ կը յիշեցընեմ թէ ամենևին ձախ կողմը չը բռնէք . . . ձիւնը հոն այնպիսի փոսեր ծածկած է, ուր բոլոր մեր եկեղեցին կրնայ անյայտ ըլլալ : » Փայտահատները խօսքը կրկնել չը

տուին, և աւելի ապահովութեան համար իրենք ալ ճիշտ Սապատողին կոխած տեղը կը կոխէին, այնպէս որ պզտի խումբին անցնելէն ետքը՝ մէկուն մտքէն չէր անցներ թէ այն տեղը եօթն հոգի մէկանց դալած են :

Այս զգուշութիւններովն Յակոբ և իւր ընկերները ողջ առողջ այնպիսի խօշընդոսներ անցուցին՝ որ առանց քաջ հովիւն հրաշալի խելացութեանը անյաղթելի պիտի ըլլային :

Ինչպէս որ ըսի, տղաքս, փայտահատները անտառէն զուգահեռական ճամբով կը քալէին, որովհետև անտառը լեռան մինչև կէսը կը տարածուէր, հետևաբար փայտահատները անտառին վրան, կամ անկէ վեր էին, բայց, այս կերպով քալելէ յետոյ մինչև այն կէտը ուր գիտէին թէ երկու եղբարց հիւղը կը գտնուէր, ստիպուեցան նօրէն իջնել դէպի անտառ, և անոր մէջ մտնել : Քանի մը վայրկեան այս նոր ուղղութիւնը բռնելէն զինի յանկարծ ականջ ներսուն տարօրինակ ձայն մը հասնելով անցաւ : Ամենքն ալ կանգ առին լսելու համար : Սղոցի մը կը ճիւն (ձայն) է, ըսաւ մէկը :

— « Ո՞վ կրնար ըլլալ այս ժամուս աշխատող » ըսաւ ուրիշ մը :

Նոյն վայրկեանին տապալրի մէկ քանի հարուածներ հնչեցին յայտնի և որոշ կեր-

պով . . . » գուցէ իմ եղբայրներս են , ըսաւ Յակոբ . . . Աստուած միայն գիտէ անոնց պատահածը . . . ամէնքնիս մէկէն ձայն տանք անոնց : »

Փայտահատները իսկոյն բարձր ձայնով մը պօռացին և լռեցին . վայրկեան մը արձանի պէս անշարժ կեցան , իրենց շունչը բռնելով որպէս զի լաւ մը իմանան թէ մարդկային ձայն մը սլիտի պատասխանէ իրենց ձայնին :

Քանի մը ըտպէ անցաւ այսպէս մահացու անձկութեան մը մէջ . . . որ անպատմելի ուրախութեան մը փոխուեցաւ , երբ հեռուէն հեռու դիշերային հանդարտութեան մէջ , երկու ձայներ հնչեցին , զորս իւր եղբարցը ձայնն ըլլալը ճանչցաւ Յակոբ : Բոլոր փայտահատները մէկէն յառաջ նետուեցան , և չընայելով ոչ ձիւնին ոչ ալ սուր և հարթ զառիվայրին , մէկ երկու վայրկենէն հասան այն անձանց քով զորս կը բնտուէին , Յակոբ իւր ընկերներուն ետեւէն հասնելու չափ ուժ չունէր , իւր եղբայրները վերստին գտնելով զգացած ուրախութիւնը , զորս մեռած կը կարծէր , այնչափ սաստիկ էր , որ քանի մը քայլ առնելէ ետքը ծնկուրները բոլորովին թուցան , և ուղեց քիչ մը նստիլ : Արդէն փայտահատները իւր եղբարցը չորս կողմը

շարուած էին , երբ Յակոբ հասաւ և ինքն ալ նետուեցաւ անոնց գիրկը առանց բերնէն խօսք մը հանելու . . . :

Յակոբ իւր յափշտակութենէն չ'էր տեսած թէ իւր Անդրանիկ եղբայրը ոտքի վերայ չ'էր , և նոր կտրուած փայտի կտորի մը վրայ նստած էր : Եւ երբոր քիչ մը ետքը տեսաւ . . . ի՞նչ , վիրաւորուած ես , աղաղակեց անոր ձեռքերը բռնելով :

— Բան մը չէ , պատասխանեց : Ծառէ մը վար ինկայ և իյնալու ատենս ճիւղի մը զարնուեցայ . հարուածը այնչափ բուռն եղաւ որ չեմ կրնար ոտքս շարժել . բայց կ'զգամ որ կտորած չ'է :

— Այո , կրկնեց Յակոբին միւս եղբայրը . բարեկամք իմ , բարեբաղդաբար շատ մեծ վնաս մը չը պատճառեց իրեն , եղբայր ըս տասը մեթրէ աւելի բարձրութենէ մը վար ինկաւ , և ճշմարիտ հրաշք մ'է որ գըլուխը չը կտորեցաւ այն ճիւղերուն մէջ , յորոց անցաւ , բարեբաղդաբար այն տեղոյն ձիւնը տակաւին կախուղ ըլլալով գետինը հասած ատեն բոլորովին մեղմացուց ցաւը : Տեսնելով որ կարող չէ քալել՝ սկսած էր սա փոքր բալխիւրը շինել , որուն վրայ կողէի դնել զինքը , և անով քաշել և մինչև տուն տանիլ : Այն իմ կարողութենէս վեր բան էր . . . բայց անց անց շատ որ ենք

ամեն բան կրնանք ընել . . . : ժամանակ չկորսնցնենք . ճամբայ ելնենք , և բոլոր մեր գըլուխն եկածները ճամբան ձեզ պիտի պատմեմ

Ս,յն ատեն վիրաւորեալը բալխիրին վրայ դրին , որ մարդու մեծութեամբ երկու կաղնափայտէ կը բաղկանար և իրարու կապուած էր միացուցիչ փայտերով , որոց վրայ երկար և կակուղ ճիւղեր դրուած էին , և որոնք բալխիրին չորս կողմը դարձած էին , որպէս զի նստարանը կակուղ ըլլայ :

Որովհետև պզտի կարաւանը վերադառնալու ատենը ամենևին արգելքի կամ դժուարութեան մը չը հանդիպեցաւ , անոր համար այս մասին ձեզ խօսք մը չը պիտի ըսեմ , որպէս զի պատմութիւնս ալ կարճ ըլլայ : Դուք կրնաք մակաբերել , իմ փոքր բարեկամներս , թէ որպիսի հրճուանօք և երախտագիտութեամբ Յակոբին եղբարցը կիները իրենց ամուսինները , իրենց տաքըրը և դրացի փայտահատներն ընդունեցին : Բայց կը մնայ ինձ ձեզ պատմել թէ երկու եղբայրները տունէն ելնելէն մինչև ազատիլը գլխուռուն ինչ բաներ անցաւ , և ասոր համար պիտի յարեմ այն պատմութիւնը , զոր ազատուած ճամբորդներէն մէկը փայտահատներուն ըսելու խօսք տուաւ :

ԳԼՈՒԽ Դ

« Տունէն մեկնած ատեննիս , հաղիւ առտուան ժամը մէկը կար . օդը բողբոջվին գոց էր , բայց տակաւին ձիւն չէր դար : Գիչ մը խորհրդակցեցանք որ աւելի ուշ ճամբայ ելնեմք : Իմ եղբայրս այնպէս կ'ուզէր , բայց ես յորդորեցի որ չ'սպասենք , ըսելով թէ երբ անգամ մը ձիւն դայ և օդը աւրուի՝ ալ չէինք կրնար երթալ հիւղէն մեր գործիքները բերելու , և այս բանը բոլոր ձմեռը մեղ շատ պիտի նեղէ : Աւելցուցի թէ առաջին ձիւները մեծ բան չեն ըլլար , և դուք ամենքնիդ ալ ասոր այսպէս ըլլալը գիտէք :

— Անտարակոյս , պատասխանեց ձեր փայտահատ մը . կարծես թէ ցուրտ եղանակը դալու ատեն , բարեգութն Սատուած նախ մեզ քիչ ձիւն կը դրկէ , որպէս զի առաջուրնէ իմանալով զդուշութիւն ընենք . . . քանի տարիներէ 'ի վեր այսպէս յանկարծակի սաստիկ ձմեռուան հանդիպած չէինք : (1)

(1) Ա.յս վէպին դէպքը 1827 ի մեծ ձմեռուան ատեն եղած է : Թիւրայի մէջ այնպիսի առատութեամբ երբէք ձիւն չէր եկած . ամեն հաղորդակցութիւնք խարանուեցան , և լեռները մնացած ձեպակառք մը քառասուն եւ ութը ժամէն կրցար Բօլխնիյէն Նիօն երթալ ( գրեթէ վաթսուն հազարամեթր երկայնութեամբ տեղ ) :



— Ուստի անտառին մէջէն մեր ճամբան  
չարունակեցինք . հետեւնիս լապտեր մը ա-  
ռած էինք , որոյ լուսովը կրնայինք փոտած  
կաղնոյն ճամբուն հետևելու , այն ճամբան  
որ շիտակ մեր առնէն կերթայ դէպի մեր  
հիւղը , և ուր Յակոբ գայլերու հանդիպե-  
ցաւ , և անոնց դէմքայութեամբ կռուեցաւ :

Արդէն տասն երկու հազարամեթրէ  
աւելի քաշած էինք երբ սկսաւ ձիւն գալ :  
Որչափ որ արդէն շուտ կը քայլէինք բայց ալ  
աւելի մեր քայլերն շտապեցինք , և անվսաս-  
հատանք մեր հիւղը , բայց բաւական նե-  
ղութիւն կրեցինք , սրովհետեւ բոլոր ծաւ-  
չեղած տեղերը ձիւնը մինչև սրունքներնուս  
կէսը կը հասնէր :

Գուք ալ գիտէք որ մեր հիւղը չորս  
սիւներու վրայ կը կենայ , և վեց ոտք սան-  
դուխով մը վեր կենումի . ասի մեզ խիստ  
չահաւոր է , և անով է որ մեր կեանքը մահ-  
ուրնէ ազատեցաւ , ինչպէս սր անով ազա-  
տեցաւ նաև մեր պապուն կեանքը :

Հիւղ մտնելուս պէս , սկսանք կրակ  
շինել վրանիս չորցնելու համար : Խիստ  
դժուար եղաւ այս , որովհետեւ կրակարա-  
նին մէջ կէս ոտք բարձրութեամբ ձիւն լեց-  
ուեր էր : Ասկէց կրնաք հասկնալ թէ որ-  
չափ խիտ էր ձիւնը սր քիչ ժամանակուան  
մէջ վառարանին խողովակն այն ատիճան  
լեցուցած էր : Երբ կրակ շինեցինք կտոր մը ,

բան կերանք առանց խօսք մը խօսելու :  
Չը համարձակելով իրարու պատմել մեր ու-  
նեցած անհանդատութիւնները : Կը մտա-  
ծէինք թէ ի՞նչ ընելու էր , ի՞նչ ըլլալու  
էր : Անանկ գէշ օդի մը ատեն հիւղէն վե-  
րագառնալ չէինք կրնար համարձակիլ , զի  
ցուրտը մեր կեանքը կը վերջացնէր . իսկ հիւ-  
ղէն չ'երնել հոն մնալը , ան ալ կասկածելի  
էր : Նոյն միջոցին ձիւնն իբր բուն լեռնային  
ձեան հիւս մը երկինքէն վար կը թափէր ,  
և այնչափ կը բարձրանար գետնէն որ հիւղին  
առատազը գետնին երեսին հետ մէկտեղ  
կերեւէր , որ ըսել է երկու մեթր բարձրու-  
թիւն : Յետոյ երկինքը քիչ մը բացուեցաւ  
և հիւսիւսային հողմը փչեց . այս դէպքը  
յուսոյ նշոյլ մը առաւ մեզ : Ամենէն ա-  
ռաջ եղբայրս որ ինձ չափ սրտաբեկ չ'էր ,  
ղգաց օդին այս փոփոխութիւնը :

« Բանի յուսարեկ ըլլաս , ըսաւ ինձ ,  
դործերնիս պիտի քաշէ , . . . մենէ աւելի  
դէշ վիճակ ունեցող մարդիկ եղած են որ  
յաջողած են ազատելու :

« Եթէ ամեն կողմ սառ կտրի՝ ըսել չէ  
թէ ալ բաներնիս բուսած է . միայն պէտք է  
որ անտառին ծայրն հասնինք , որ ասկէ եր-  
կու հազարամեթր հեռու է : Այնչափ ցուրտ  
է որ եթէ բարձր տեղուանք ելնենք ան-  
շուշտ ձիւնին վայէն քալելու կարող պիտի

ըլլանք : Մեր որսորդութեանցը մէջ , քանի  
անգամ եղաւ որ ձիւնը մինչև կուրծքերնիս  
հասաւ , և չմեռանք : Սպասենք քիչ մ'ալ ,  
և այս գիշեր լուսնին լուսովը կը մեկնինք :  
Իրիկուան դէմ : Խեղճ Սևալը , որ մէկ  
տեղ տարած էինք , սկսաւ հասել գայլի դէմ :  
Եթէ գայլերը հաւաքուին , կըսէի մըտ  
քէս , և մեր հոտն առնեն անշուշտ հարկ  
է որ մեր հիւղին մէջ կամ անօթութենէ  
մեռնինք կամ գայլերու ճարակ ըլլանք :

« Գուցէ սուրհանդակ մ'է (1) ըսաւ  
եղբայրս , որ կերևի թէ մտքէս անցածն  
իմացաւ , մեր ջահերովը կրնանք անոր  
դէմ դնել : »

Դժբաղդարար կը սխալէր , և շուտով  
եօթն ութն գայլեր երևցան , և սկսան  
հիւղին բոլորտիքը ոռնալ :

Եղբայրս . կարծես թէ քանի վտանգը  
կը մեծնար իր միտքն ալ անչափ կը սուր  
նար , ինձ ըսաւ այն ատեն . « եղբայր , ալ  
երեբալու չի գար . բան մը կը մնայ  
միայն մեզ ընել . լաւ մտիկ ըրէ ինձ . հոս  
կէ մինչև անտառին ծայրը ծառերը շատ  
խիտ են , և ճիւղերնին իրարու մէջ ան  
ցած . պէտք է Սևալը զոհենք և դուրս

(1) Ժիւրայի մէջ մէկ գայլի համար  
սուրհանդակ կըսեն . — Բոլոր տարին գայլերը  
իրարմէ զատ կապրին . բայց ձմեռը խուճի  
խուճի կը միանան և խիստ վտանգաւոր կըլլան .

ներտենք : Գայլերը անոր ետեւէն լինալու և  
անոր մարմնոյն վրայ մաքառած ատեննին  
մենք կը վազենք և կերթանք ծառի մը վը  
րայ կեննենք , և ծառէ ծառ յառաջ կանց  
նինք մինչև այն հեղեղատին տեղն , որ աս  
կեց երկու հարիւր քայլ անդին է . հեղիղա  
տէն ալ անդին կ'անցնինք կուենեաց հաստը  
ճիւղերուն միջոցաւ , որ հոն կը գտնուին .  
ինչպէս որ այս ամառ քանի մը անգամ այս  
պէս ըրինք , այս կերպով հեղեղատը՝ մեր և  
գայլերուն մէջանդը կը մնայ , և անոնցմէ  
բաւական հեռացած կ'ըլլանք : Դուրս  
կեննենք անտառէն , կամ դարձեալ ծառի  
ճամբայով և կամ գետնին վրայէն եթէ  
ձիւնը շատ կակուղ չէ եթէ , ինչպէս որ ըսի  
անտառէն դուրս ելնենք , աղատութիւննիս  
դրեթէ կատարեալ կ'ըլլայ : Երկինք ասկէ  
զատ ուրիշ միջոց չէ ձգած մեր ձեռքը  
կեանքերնիս ազատելու համար . . . Աստու  
ծոյ շնորհիւր , այդ միջոցին ապաւինինք : »

Եղբայրս ասոնք այնպիսի հաստատ և  
ստոյգ ձայնով մը խօսեցաւ ինձ որ՝ իմ ար  
կարութեանս վրայ ամչցայ . նորէն կըտրե  
ցինք հացի կեղև մը զօրութիւն ստանալու  
համար , և Հայր մեր մը ըսեինէս յետոյ , եղ  
բայրս և ես իւր խորհուրդը գործադրելու  
պատրաստուեցանք : Բայց մեր ընելու ա  
ռաջին գործը Սևալը գայլերուն նետենէն էր :  
Խեղճ անասունը մեզ կը նայեր , մեզ կը հոս

հոտեր, մեզ կը փայփայէր, որովհետեւ հասկը  
 ցած էր թէ պիտի մեկնէինք : Խոնարհեցայ  
 զայն բռնելու համար, բայց Մեռ-ի իւր թա-  
 թերը ուսերուս վրայ դրաւ և երեսս լիզեց :  
 Չէք կրնար հաւատալ թէ որչափ այս բանն  
 իմ սիրտս յուզեց . . . եղբայրս դրան նիզը  
 կը բռնէր, որպէս դի բանայ զայն . . . « կե-  
 ղեայ թէ ըսաւ ինձ իմ երկմտիլս տեսներով  
 աւելի կը սիրես այս շունը քան քու եղբայ-  
 րդ և կինդ . . . » Ս,յո իրաւացի յանդիմա-  
 նու թենէն զգածուեցայ, բռնեցի շունը իւր  
 վիզէն . եղբայրս դուռը քիչ մը բացաւ, եւ  
 ալ Մեռ-ի դուրս ձգեցի :

Նոյն վայրկենին այնպիսի աղմուկ մը  
 փրթաւ որ, եթէ հարիւր տարի ապրէի,  
 չէի կրնար մոռնալ . անհնարին է երևակա-  
 յել այնպիսի ահագին մռնչիւններ :

Ինչպէս եղբայրս գուշակած էր, Մե-  
 ո-ի հարիւր քայլ մը քալեց՝ դայլերն իր ե-  
 տեէն քաշելով : Սոյն միջոցին մենք ալ շու-  
 տով վազեցինք ցատկեցինք դէպի այն ծա-  
 ուր, զոր յառաջուց որոշած էինք իրարմէ  
 չը գատուելու համար, հազիւ ժամանակ  
 ունեցանք անվաանդ մինչև դադաթը  
 բարձրանալու :

Ս,յն ատեն սկսանք, միշտ գայլերը հե-  
 տերնիս ունենալով, ճիւղէ ճիւղ, ծառէ  
 ծառ անցնիլ հեղեղագաին ուղղութեամբը  
 Իրաւերը ձիւնով ծածկուած ըլլալնուն հա-

մար շատ կը նեղուէինք : Քանի մը վայրկե-  
 նէ յետոյ ալ ձեռքերնիս անընդհատ ձիւ-  
 նին քսուելով վարժուեցաւ :

Հարկ չէ ըսել ձեզ թէ որչափ դարձու-  
 ածներ ըրինք, և որչափ անգամ ստիպուե-  
 ցանք անցած տեղերնէս նորէն ետ դառնալ,  
 որովհետեւ այն ծառը որուն վրայ կը գտնու-  
 էինք մեզ կրելու կարող ճիւղով մը հազորդ  
 չէր ուրիշ ծառի մը այն կողմին՝ ուր մենք  
 յառաջանալ կուզէինք :

Գայլերը կը հետևէին մեր բոլոր շար-  
 ժու մներուն և կերնէր որ հաստատ գի-  
 տաւորութիւն ունէին սպասելու թէ մեկեր-  
 նիս ծառէ մը սահելով մէջերնին կրնանք,  
 յաճախ առջևի ոտքերնին այն ծառին կոճ-  
 ղէն վեր կը բարձրացնէին, ուր մենք կը գըա-  
 նուէինք . երբեմն ալ օդին մէջ կը խոյանա-  
 յին, և ահաաներնին կը կրճատէին մեզ բըռ-  
 նել խածնելու համար . բայց որովհետեւ  
 մենք միշտ խիստ բարձրերը կենալ կը նա-  
 յէինք, անոր համար չը կրցին մեզ հասնիլ,  
 թէպէտեւ վեր ցատկելու ալ խիստ յաջողակ  
 էին :

Հասանք վերջապէս այն կուենիին, որ  
 հեղեղատին ծայրը կը բարձրանայ, և զայն  
 իւր անասման ձիւղերովը կը ծածկէ : Ս,յո  
 կերպով անցանք անկէ : Գայլերն անոր  
 ծայրն հասնելով ստիպուեցան կանգ առ-  
 նուլ, տեսնելով թէ ալ այնուհետեւ անօ-

գուտ էր մեր ետեւէն իննալը , և գուցէ նա և ուրիշ որսի մը հոտն առնելով , յանկար ծակի դէպի ուրիշ կողմ մը սկսան վազել և աներևոյթ եղան :

Այն ատեն կուենիէն վար իջանք , որուն վրայ ալ հազիւ կենալու ուժերնիս մնացած էր . մեր ծունկերը պատուած էին , ձեռունիս ճեղքուած և արիւնալի : Բայց ձիւնը այնչափ կակուղ էր , որ չկրցանք յառաջանալ , և պէտք եղաւ նորէն ձեռք առնել մեր օղեղէն ընթացքը անտառէն դուրս ելնելու համար :

Վերջին ծառերուն հասած էինք , երբ եղբայրս սոսկալի կերպով մը վար ինկաւ , ես ալ գրեթէ ինքզինքս ձգեցի որ անոր քով իննամ . խելքը գլխէն դացեր էր և ինչ ընելը չէր գիտեր , բայց երբ ելնել ուզեց իւր աջ ոտքին մէջ այնչափ սաստիկ ցաւ մը զգաց որ չը կրցաւ ոտքի վրայ կենալ : Գրեթէ անտառէն դուրս ելած էինք , և ձիւնը արդէն շատ աւելի կարծր էր . ուստի եղբայրս ուսերուս վրայ առի և բերի մինչև հոն ուր դուք եկաք մեզ գըտաք : Հոն հասնելով միտք ըրի անմիջապէս պզտի բալսիւր մը շինել որուն վրայ կուգէի դնել իմ եղբայրս , և հաստատ կերպով որոշած էի որ այնպէս զինքը քաշէի տանէի մինչև տուն , կամ գէթ կարողութիւնս հասածին չափ տեղ :

Ասկից անդին մեզ պատահածները գիտէք , և թէ ինչպէս Յակոբայ և ձեր շնորհիւր հիմայ այս տանը մէջ կը գտնուինք , զոր մէկ մ'ալ տեսնելիք չ'ունէինք :

Հիմայ , իմ պղտի բարեկամներս , եթէ կուղէք դաղափար մ'ունենալ այն շարժարանքին վրայ որով նեղուեցան Յակոբայ հարսերը օրուան մէկ մասին և գիշերուան երեք քառորդներուն մէջ , հարցուցէք ձեր սրտին , և պիտի տեսնէք թէ որչափ տաղնապի և անհասնգատութեան մէջ պիտի ըլլայիք եթէ դուք ալ ազդականներ , բարեկամներ ունենայիք , որոնք կորսուած ըլլային այն պիտի անտառի մը մէջ , որ լի էր գահաւանդներով և մարդախոշոշ գայլերով : Արդեօք որչափ պիտի կսկծար սիրտերնիդ եթէ քսան և չորս ժամ անդադար ինքնիւրեննուդ ըսէիք , գուցէ եղբայրս , այս վայրկենիս բսլորովին ուժէ ինկած՝ փոսի մը մէջ և ձիւնին տակ անցայտ եղած է :

Ասկէց զատ , տղաքս , բոլոր ձեր կենաց ընթացքին մեջ , ամեն անգամ որ կը տեսնէք ուրիշները նեղութեան և տագնապի հասած , ինքզինքնիդ անոնց տեղը դրէք . այնպիսի վիճակի մը մէջ ձեր քաշածներէն իմացէք թէ անոնք ալ որչափ անձկութեան մէջ կըլլան . այս կերպով բը-

նականաբար անոնց վիճակին վրայ ցու պիտի  
տի դգաք, և պիտի ուզէք ձեր կարողու  
թեանը ներածին չափ օգնութեան հաս  
նիլ անոնց :

Կը վերջացնեմ իմ վէպս, ըսելով ձեզ  
թէ Յակոբ, որ իմ պատմութեանս գլխաւոր  
նը եղաւ, իւր այն առոյգ հասակէն բոլոր  
իւր ծանօթիցը քով պատիւ և սէր ստա  
ցաւ : Անոնք որ քանիցս ծաղրած էին իւր  
տկարութիւնը, դառնապէս զղջացին իրենց  
հեզնութեամբը նախատած ըլլալուն այն  
պիտի արքասիրտ անձ մը, որ հազուագիւտ  
անձնութեան մը օրինակ եղաւ : Իսկ  
անոր եղբայրներն ալ երգում ըրին և բռն  
չը մոռնալ թէ իրենց կեանքը Յակոբայ կը  
պարտէին, և երբ անծանօթ անձ մը զայն  
ծաղրեր տեսնելով անոր երկայն թևերը,  
երկար սրունքները և ուսերուն մէջ բնկը  
մուտք գլուխը. « պարոն, կ'ըսէին անոր  
իւր եղբայրները կամ իւր ծանօթները, ե  
թէ բարեգութն Աստուած գեղեցկութիւն  
չէ տուած այս խեղճ մարդուն, բայց զա  
նի բարի, ազնիւ, սրամիտ և քաջասիրտ  
ըրած է. նա իւր կեանքը վտանգի դրաւ,  
և անճողոպրելի մահուանէ աղատեց երկու  
ընտանեաց հայրեր... հիմայ ծաղրեցէք  
զայն եթէ երես ունիք : »

ՎԵՐՉ



Գր. Յ. Մանուկ

29



Գին 3 դրուշ



10. 44.

6236